

Ա. Մուրվալյան

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Լեզուն պատկանում է հասարակության գոյության ամրոց՝ ժամանակամիջոցում գործող հասարակական երևույթների թվին և անմիջականորեն կապված է մարդկային մտածողության հետ, ծնվում ու զարգանում է հասարակության ծննդի ու զարգացման հետ միասին և, հետևաբար, մեռնում է հասարակության մահվան հետ միասին։ Հասարակությունից դուրս լեզու չի կարող ծնվել և լեզուն ու նրա զարգացման օրենքները,—սովորեցնում է մեզ քնկեր Ստալինը,—կարելի է հասկանալ միայն այն դեպքում, եթե այն ուսումնասիրվում է անխզելի կապի մեջ հասարակության պատմության հետ, ժողովրդի պատմության հետ, որին պատկանում է ուսումնասիրվող լեզուն և որը հանդիսանում է այդ լեզվի ստեղծողն ու կրողը՝

Բնական է, որ հայոց լեզուն էլ ծնվել ու զարգացել է այդ լեզուն ստեղծող ու կրող հասարակության ծննդի ու զարգացման հետ միասին և այն պետք է ուսումնասիրել անխզելի կապի մեջ հայ հասարակության պատմության հետ, հայ ժողովրդի պատմության հետ։

Հայերը, իբրև ժողովուրդ կազմավորվելով շատ շուտ (դեռևս, հավանաբար, ուրարտական շրջանում)՝ 7—6-րդ դարերում (մ. թ. ա.) կազմավորման պրոցեսում խոշոր տեղաշարժներ են ապրել իրենց ցեղերի մեջ, նրանք համախմբվել ու ավելի ուժեղացել են հայ-արմենական ցեղային միության շուրջը, որ պարձել է այն հիմքը, որի վրա ձևավորվել է հայ ժողովուրդը իր կուլտուրայով ու լեզվով։

Այն տերիտորիայի վրա, ուր ձևավորվել ու ապրել է հայ ժողովուրդը, ապրել են նաև տարրեր ծագում ունեցող բազմաթիվ ցեղեր ու լեզվական կոլեկտիվներ։ Հայտնի է, որ Հայկական Լեռնաշխարհում ապրած կամ բնակություն հաստատած ցեղերից, որոնց մասին հիշատակած ունեն Հերոդոտն ու Դսենոֆոնը (ինչպես նաև մեր պատմիչները), եղել են կորգուխներ, մակրոններ, խալգայներ, մարգեր, տաոխներ, մոսխներ, կիմերներ, ուտիներ, տիրարիներ, պակտեր և ուրիշ ցեղեր, որոնց լեզուների որոշ հետքերը բնականաբար պահպանվել են հայերենում՝ շնորհիվ խաչավորման տեական պրոցեսում հայոց լեզվի հաղթանակի և հիմնականում նրա բառային կազմի որոշ հարստացման՝ ի հաշիվ այդ պրոցեսում պարտված լեզուների։

Ինչպես ամեն լեզվի, հայոց լեզվի բառային կազմն էլ արտացոլում է նրա վիճակի պատկերը, նրա պատմությունը, նրա անցյալն ու ներկան, նրա փոփոխություններն ու զարգացումը։ Ճիշդան ավելի հարուստ և ավելի բազմակողմանի է բառային կազմը,—գրում է քնկեր Ստալինը,—այնքան

1 Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Երևան, 1931, էջ 49։

ավելի հարուստ ու ավելի զարգացած է լեզուն¹։ Խսկ լեզուն անմիջակա-
նորեն կապված է մարդու արտադրական գործունեության հետ, նրա աշ-
խատանքի բոլոր ոլորտներում, Վերա համար էլ լեզվի բառային կազմը,
որպես փոփոխությունների նկատմամբ առավել զգայուն, գտնվում է հա-
մարյա անընդհատ փոփոխության վիճակում²։

Այդ փոփոխությունը հայոց լեզվում կատարվել է սովորաբար գոյու-
թյուն ունեցող բառաբանի նոր բառերով համալրելու միջոցով, որոնք առաջ
են եկել սոցիալական կարգերի փոփոխությունների, արտադրության զար-
գացման, կուլտուրայի, գիտության և այլնի զարգացման կապակցությամբ։
Այդ բնիկացումը թեև հայոց լեզվի բառային կազմից սովորաբար դուրս
են բնկել որոշ քանակությամբ հնացած բառեր, բայց նրան ավելացել են
ավելի շատ նոր բառեր։ Այդպիսով, հայոց լեզվի բառային կազմը զար-
գացել, համալրվել է։ Սակայն, չինչ վերաբերում է բառային հիմնական
ֆոնդին,—գրում է բնկեր Ստալինը,—սպա այն հիմնականում պահպան-
վում է ամբողջապես և օգտագործվում որպես լեզվի բառային կազմի
հիմք³։

Հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդն էլ, որ նմանապես փոխվել է
համեմատաբար շատ դանդաղ, քան նրա բառային կազմը, հիմնականում
պահպանվել է և օգտագործվում է որպես հայոց լեզվի բառային կազմի
հիմք, իր ներքին միջոցներով կազմելով բազմաթիվ նոր բառեր ու արտա-
հայտություններ։ Բառային այդ հիմնական ֆոնդի հետ միասին փոխվել է
նաև հայոց լեզվի քերականական կառուցվածքը, բայց այն փոխվել է է՛լ
ավելի դանդաղ, քան նրա բառային հիմնական ֆոնդը։ Ժամանակի բնիկաց-
քում նա փոփոխություններ է կրել, կատարելագործվել է, բարելավել ու
ճշգրտել է իր կանոնները, հարստացել է նոր կանոններով։ Այդ փոփոխու-
թյունը կատարվել է դարաշրջանների բնիկացում⁴ քերականական կառույ-
վածքի հիմքերը պահպանելու միջոցով։ 'Գրաշրջանների բնիկացում
մշակված և լեզվի մեջ միս ու աղյուռն դարձած քերականական կառույ-
վածքը,—գրում է բնկեր Ստալինը,—փոփոխվում է է՛լ ավելի դանդաղ, քան
բառային հիմնական ֆոնդը⁵։

Լինելով մի շարք գրաշրջանների արդյունք և հասարակությանը
հաջողությամբ ծառայելով մի շարք գրաշրջանների բնիկացում, լեզվի
քերականական կառուցվածքը և նրա բառային հիմնական ֆոնդը կազ-
մում են լեզվի հիմքը, նրա սպեցիֆիկայի էությունը⁶,—եզրակացնում է
բնկեր Ստալինը։

Պետք է ենթադրել, որ ինչպես մյուս լեզուների, հայոց լեզվի տար-
րերն էլ նմանապես սաղմնավորվել են խոր հնադարում, հանդիսանալով ոչ
բարդ լեզվի տարրերը, բառային ազգատիկ ֆոնդով և քերականական պրի-
միտիվ կառուցվածքով։ Հետագայում մեծ փոփոխություններ են մտել հա-
յոց լեզվի մեջ շնորհիվ արտադրության հետագա զարգացման, պատկար-
գերի երևան գալու, գրության ստեղծման, պետության ծագման, առևտրի

¹ Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Երևան, 1951, էջ 51—52։

² Նույն տեղում, էջ 53։

³ Նույն տեղում, էջ 56։

⁴ Նույն տեղում, էջ 57։

⁵ Նույն տեղում։

զարգացման, տպագրական դազդահի երևան գալու, գրականության առաջ-
րնթացի և այլն: Մյուս ժամանակամիջոցում ցեղերն ու ժողովուրդները
մասնատվում էին ու բաժանվում, խառնվում էին և խաչավորվում, իսկ
հետագայում, — շարունակում է ընկեր Ստալինը, — երևան եկան ազգային
լեզուներ և պետություններ, տեղի ունեցան ռևոլուցիոն հեղաշրջումներ,
հին հասարակական կարգերը փոխարինվեցին նորերով: Այս բոլորը է՛լ
ավելի մեծ փոփոխություններ մտցրին լեզվի և նրա զարգացման մեջ¹:

Հայոց լեզվի զարգացումն էլ, մյուս լեզուների նման, տեղի է ունե-
ցել գոյություն ունեցող իր հիմնական տարրերի ծավալման ու կատարե-
լագործման միջոցով, լեզվի նոր որակի, նոր կառուցվածքի տարրերի աս-
տիճանական ու տեական կուտակման և հին որակի տարրերի աստիճանա-
կան մահացման միջոցով: Այդ ընթացքում, ցեղերի ու ժողովուրդների
մասնատման ու բաժանման, խառնման ու խաչավորման ժամանակամիջո-
ցում, որպես այդ խաչավորումների ժամանակ հաղթող դուրս եկող լեզու,
հայոց լեզուն որոշ չափով հարստացրել է իր բառային կազմը:

Ն. Մառը և նրա հետևորդները կարծում էին, թե պատմության մեջ
տեղի ունեցած լեզուների խաչավորման բազմաթիվ փաստեր հիմք են տալիս
ենթադրելու, որ խաչավորման ժամանակ նոր լեզու է գոյանում պայթյունի
միջոցով, հին օրակից հանկարծակի նոր որակի անցնելու միջոցով: Բա-
րդուրովին ճիշտ չէ², — գրում է ընկեր Ստալինը, — քանի որ ...լեզվի ան-
ցումը հին օրակից նոր որակի տեղի է ունենում ոչ թե պայթյունի մի-
ջոցով, ոչ թե գոյություն ունեցող լեզուն ոչնչացնելու և նորը ստեղծելու
միջոցով, այլ նոր որակի տարրերի աստիճանական կուտակման միջոցով,
հետևաբար, հին որակի տարրերի աստիճանական մահացման միջոցով³:

Ճիշտ չեն նաև նրանք, ովքեր լեզվի, այս պարզում՝ հայոց լեզվի
բառային հիմնական ֆոնդը՝ գիտական նոր հասկացությունը հակված են
հասկանալու այնպես, որ դա ($\equiv$ բառային հիմնական ֆոնդը), կարծես թե
տրամադրվում է միայն այն սկզբնական բառապաշարը, որից, որպես կա-
նոն, սկսվում է լեզվի բառային կազմը, նրա զարգացումը: Այլ կերպ ասած՝
հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդի տակ նրանք սխալմամբ հասկա-
նում են միայն հնդեվրոպական բառերն ու բառարմատները, որոնք հա-
յոց լեզվին անցել են նրա, այսպես կոչված, նախապատմական շրջանից:
Ընկեր Ստալինը սովորեցնում է մեզ, որ «ժամանակակից լեզվի տարրերը
սողմնավորվել են գեոկոս խոր հնադարում, նախքան ստրկության դարա-
շրջանը: Դա ոչ բարդ լեզու էր, բառային շատ աղքատիկ ֆոնդով, բայց իր
քերականական կառուցվածքով, ճիշտ է, պրիմիտիվ, բայց, այնուամենայ-
նիվ, քերականական կառուցվածքով⁴: Այստեղից էլ կարելի հետևյալն է, որ
հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդը նույն լեզվի սկզբնական շրջանի
(ասենք՝ «նախալեզվից» կամ «հիմք-լեզվից» եկող) բառային աղքատիկ
ֆոնդն է, որը գոյություն է ունեցել խոր հնադարում, նախքան ստրկու-
թյան դարաշրջանը: Պետք է ասել, որ հայոց լեզվի սկզբնական կամ նա-
խապատմական շրջանից եկող բառապաշարը, որքանով դա անփաս է հա-

¹ Ի. Ստալին. Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Երևան, 1951, էջ 60:

² Նույն տեղում, էջ 63:

³ Նույն տեղում, էջ 63:

⁴ Նույն տեղում, էջ 59:

յեւզ գարերի ու դարաշրջանների բնթացքում, հանդիսանում է այդ նույն լեզվի Քրառային հիմնական ֆոնդի» զլխավոր աղբյուրներից մեկը, բայց ոչ միակը, բառապաշարի ոչ բոլորովին Վաւագույն» կամ Վաւելի էական» մասը:

Պետք է ենթադրել, որ նախապատմական շրջանում (գեոէս խոր հնադարում) հայոց լեզվի բառային ֆոնդը ծավալով համեմատաբար ավելի մոտ պետք է լիներ իր բառային կազմին, և միաժամանակ պետք է փոխվեր դանդաղ և հիմնականում անցնէր այդ նույն լեզվի պատմական շրջանի կամ նախադրավոր շրջանի բառային կազմին և դառնար նրա հիմքը՝ նոր բառերի կազմութեան համար:

Բառային կազմի երկրորդ շրջանը կապւած է հայ ժողովրդի պատմական շրջանի հետ՝ լայն առումով: Պատմական շրջանի բառային կազմը բաժանւում է՝ նախագրավոր շրջանի և գրավոր շրջանի:

Հայոց լեզվի գրավոր շրջանի բառային կազմը իր հերթին բաժանւում է՝ հին շրջանի (գրաբարի), միջին շրջանի (միջին հայերէնի) և նոր շրջանի (արդի հայերէնի): Արդի հայերէնի բառային կազմն էլ իր հերթին բաժանւում է՝ նախասովետական շրջանի և սովետական շրջանի:

Հայոց լեզվի այս տարրեր շրջանների բառային կազմերը փրար նկատմամբ ունեն այն ընդհանուրը, որ հատուկ է հայերէնին ընդհանրապէս՝ հայ ժողովրդի համար լինելով բնդհանուր ու հասկանալի (համաժողովրդական), և այն տարրերութեանը, որ առաջ է եկել պատմականորէն, նախ, հայոց լեզվի զարգացման ներքին օրէնքներով և ապա, մի կողմից, հայոց բարբառներից ու տեղական խոսվածքներից (ենթարկւած հայ ցեղի կամ ժողովրդի միասնական ու ընդհանուր լեզվին) և, մյուս կողմից, այն լեզուների խաչավորումից, որի տեղական պրոցեսում հայոց լեզուն հաղթող է դուրս գալիս և որոշ չափով հարստացնում է իր բառային կազմը:

Հետեւապէս լեզվի բառային կազմը փոփոխական է ու շարժուն՝ կապւած լեզվի զարգացման հետ, հասարակական ու պատմական նոր երեւոյթների առաջացման ու զարգացման հետ, արտադրութեան ու պետութեան կառավարման ձեւերի փոփոխման հետ, կուլտուրայի ու մորայի, տեխնիկայի ու գիտութեան տեւման ու զարգացման հետ և այլն: Այս ու նման փոփոխութեաններին հետ միասին, բնականաբար, լեզվի բառային կազմն էլ փոփոխւում է. նախ՝ այն համալրւում է զգալի քանակութեամբ նոր բառերով ու արտահայտութեաններով (ստեղծւած ներքին բառակազմութեան՝ բառածանցման ու բառարարդման միջոցներով և փոխառութեաններով), 2) փոխւում է մի շարք բառերի ու արտահայտութեանների իմաստը, որոնք ստանում են իմաստային նոր նշանակութեաններ, 3) բառարանից դուրս են բնկնում որոշ քանակութեամբ հնացած բառեր և այլն:

Նման փոփոխութեաններ է կրել նաեւ հայոց լեզվի բառային կազմը:

Բայց նախապատմական շրջանում հայոց լեզվի բառային կազմը ծավալով համեմատաբար ավելի մոտ լինելով նրա բառային ֆոնդի հետ՝ այն պետք է փոխվեր համեմատաբար դանդաղ և հիմնականում պետք է անցնէր հայոց լեզվի պատմական շրջանի (նախադրավոր շրջանի) բառային կազմին և դառնար նրա հիմքը՝ նոր բառերի կազմութեան համար:

Հայոց լեզվի այս երկու շրջանի բառային կազմի մասին մենք լրիւ գաղափար չունենք և չենք էլ կարող ունենալ: Մենք այդ մասին գաղա-

փար կարող ենք կազմել միայն այնքանով, որքանով հայոց լեզվի նախապատմական շրջանի և պատմական (նախագրավոր) շրջանի բառային կազմն արտացոլված է հայոց լեզվի պատմական գրավոր հին շրջանի (գրաբարի) բառային կազմի մեջ և այն կարելի է կապել նրան ազգակից այսօրվա կենդանի կամ իրենց սեպագիր կամ հիերոգլիֆ արձանագրությունները թողած հին մեռած լեզուների հետ (խեթերենի, ուրարտերենի և այլն):

Նման բառերի թիվը համեմատաբար շատ քիչ է: Դրանցից են, ինչպես հայտնի է, օրինակ՝

1) Հյ. ալն=ռուս. (հ. սլ.) око, սանսկ. a'ksi, իրան. a'si, լիթ. akis, ն. գերմ. auge և այլն:

2) Հյ. աչք=ռուս. (հ. սլ.) очи, սանսկ. a'ksi, իրան. aši, լիթ. akis, գերմ. auge և այլն:

3) Հյ. դու=ռուս. ты, սանսկ. tva'm, իրան. tū, լիթ. tu, գերմ. du և այլն:

4) Հյ. դուռն=ռուս. дверь, սանսկ. dvar, իրան. dvar, լիթ. dūrys, ն. գերմ. daur և այլն:

5) Հյ. եղբայր=ռուս. брат, հ. սլ. bratrū, սանսկ. bhratar, իրան. bratar, լիթ. broter, ն. գերմ. brodar և այլն:

6) Հյ. մայր=ռուս. (հ. սլ.) мать, սանսկ. matar, իրան. matar, ն. գերմ. muoter և այլն:

7) Հյ. միս=ռուս. (հ. սլ.) мясо, սանսկ. masa, լիթ. mesa, ն. գերմ. mimz և այլն:

8) Հյ. նոր=ռուս. (հ. սլ.) новый, սանսկ. nava, իրան. nava, լիթ. navas, ն. գերմ. niujis և այլն:

9) Հյ. սիրտ=ռուս. сердце, լիթ. širdis և այլն:

10) Հյ. տասն=ռուս. (հ. սլ.) десять, սանսկ. daçan, իրան. dasa, լտ. decem, լիթ. desimt և այլն, և այլն:

Հիշյալ բառերը, որ գալիս են հայոց լեզվի նախապատմական շրջանից, հնչյունական որոշ օրենքների համաձայն կապվելով այսօրվա մի շարք կենդանի (ինչպես նաև որոշ հին մեռած) լեզուների հետ՝ լեզվաբանները վերականգնում են նաև նրանց նախնական ձևերը. այսպես, օրինակ՝ հյ. ալն=ռուս. око=սանսկ. o'ksi, որոնց սկզբնական ձևը (հնիս.) համարում են oknos, հյ. աչք=ռուս. очи=սանսկ. a'ksi—հնիս. ձևը համարում են okī. հյ. դու=ռուս. ты, սանսկ. tvam—հնիս. ձևը համարում են tu կամ tū. հյ. դուռն=ռուս. дверь=սանսկ. dve'r—հնիս. ձևը՝ dhur. հյ. եղբայր=ռուս. брат=սանսկ. bhrā'tar—հնիս. ձևը՝ bhrater. հյ. մայր=ռուս. мать=սանսկ. matar—հնիս. ձևը՝ mater. հյ. միս=ռուս. мясо=սանսկ. māsā—հնիս. ձևը՝ memso. հյ. նոր=ռուս. новый—սանսկ. nava—հնիս. ձևը՝ nevros. հյ. սիրտ=ռուս. сердце—հնիս. ձևը՝ k'erdi... և այլն:

Դեռ ավելին. Որոշ լեզվաբաններ «վերականգնում» են նաև, այսպես կոչված, հնդեվրոպական ճնախարկեզուն» կամ «հիմք-լեզուն» և փորձեր են անում այդ լեզվով ղ ղ նույնիսկ թխսել, որը լոկ միայն նրանց երևակայության արդյունքն է, քանի որ լեզուն անմիջականորեն կապված լինելով մտածողության հետ՝ բնական է, որ դարաշրջանների պատմությանը հանձնելով ղ այդ մտածողության, նույնիսկ հաճախ լեզվական նախնական ձևերի

վերականգնումը բացի խիստ խաբուսիկ ու երեակայական լինելուց՝ ոչ մի պատմական հիմք չունի, թեև հայոց լեզվի բառային կազմի նախապատմական շրջանի որոշ տարրերը ծագումաբանական տեսակետից կապվում են այսօրվա մի շարք կենդանի և որոշ հին մեռած լեզուների հետ:

Հայոց լեզվի բառային կազմի նախապատմական շրջանի որոշ տարրերը կապվում են նաև ծագումաբանական տեսակետից կապ չունեցող, բայց երկար դարերի ընթացքում իրար հարևանություն, ամենամոտ շփումների ու փոխհարաբերությունների մեջ ապրող, այսօրվա կենդանի մի շարք լեզուների հետ, ինչպիսիք են՝ վրացերենը և կովկասյան մյուս լեզուները:

Քաղաքական և կուլտուր-տնտեսական կապերը լեզվական տարրեր կուլեկտիվների միջև միշտ էլ անխուսափելի են: Այդ կապերը, նախ և առաջ, դրսևորվել են լեզվական տարրեր կուլեկտիվների միջև բառերի անցումներով ու յուրացումներով: Ուստի այս կամ այն բառը միաժամանակ գտնվում է մի քանի լեզվում: Այսպես, օրինակ, որոշ բառեր գտնվում են հայերենում, վրացերենում և հնագույն մեռած լեզուներում (օրինակ՝ խեթերենում, ուրարտերենում և այլն): Այդպիսի բառերից են, օրինակ, հյ. աղանձ-ել սրովել, խարկել, մրկել (աղանձ թխարկած ցորեն), վրց. ოღობდ-ვა (ալանձվա և լանձվա սիսակ, խանձել) և խեթ. aland կամ land ծնունդն ունի:

Այս բառը պրոֆ. Աճառյանը (սԱրմ. բառ. ք, հավելված, էջ 79) համարում է սրնիկ հայ բառ՝ հնխ. Indh- ձևից ծագած, որ ստորին ձայն-դարձն է lenth ժկերակուր պատրաստել, խորովել արմատի. ժառանգներն են սանսկ. randhi- ժելելը, հուն. λᾱναι, գավառ. λαμα σκασայի ետտանի, հպրուս. landam ժկերակուր, իռլ. հկորն. lann տապակած: Եթե այս այսպես է¹, ապա վրացերեն ձևը, ուրեմն, հայերենից է դալիս վաղագույն ժամանակներից: Հայերեն այդ բառը (աղանձ) գալով, այսպես կոչված, նախապատմական շրջանից՝ անցել է նրա պատմական շրջանի բառային ֆոնդի մեջ, որ ապրել է շատ երկար, դարերի ընթացքում և լեզվին հիմք է տվել նոր բառերի կազմության համար (աղանձ, աղանձացու, աղանձել, բերանը աղանձվել սրերանը ցամաքել, պապակել և այլն): Նույնը և հայերենից անցած նույն բառաձևը վրացերենում: Մի այլ օրինակ. հյ. ջախ-ել (որից և՛ արմատի կրկնություն՝ ջախ-ջախ-ել ժամուր զարնել, խորտակել, փշրել), վրց. ჯახ-ება (ջախ-երա ժամուր զարնել, հարվածել) կամ ჯახ-ებ-ი (ջախ-ուն-ի=հյ. ջախ-ուն՝ ընդհանուր -ուն = -յուն ածանցով) և խեթ. zahha ժկով, մարտ և այլն: Առաջինից տարրերվում է նրանով, որ սա չի դալիս նախապատմական շրջանից և չի կապվում հնդեվրոպական մյուս լեզուների հետ, բայց հայոց և վրաց լեզուների հնագույն բառերից է՝ գտնվելով նրանց բառային հիմնական ֆոնդի մեջ և կապվելով խեթերենի հետ (պրոֆ. Աճառյանը հյ. այդ բառը համարում է կովկասյան փոխառություն):

Նման ընդհանուր բառերի թիվը հասնում է երկու տասնյակի: Դա ցույց է տալիս այն վաղագույն շփումները, որ նախապես ունեցել են հա-

¹ Հաշվի առնելով Մեյլեյի այն կարծիքը հնդեվրոպական բառերի բացատրության մասին, որի համաձայն, ինչպես նա է ասում, ծնունդիսկ այնտեղ, որտեղ նրանց — այդ բառերի՝ բացատրությունը երևում է հավաստի, ոչ մի երաշխիք չկա, որ այդ էլ խաբուսիկ չէ (աես՝ A. Meillet, Esquisse d'une grammaire comparee de l'arménien classique, Vienne, 1903 թ. (նույնը 1930 թ. հրատ.) աշխատության առաջաբանը):

յոց և վրաց նախահայրերը խեթերի հետ, ինչպես նաև մյուս մեծած հին լեզուները կրող երբեմնի ցեղերի ու ժողովուրդների հետ:

Պատմա-համեմատական լեզվաբանությունը հնչյունական որոշ օրենքների հիման վրա (եթե այն որոշ դեպքերում, Մեյերի խոսքերով ասած, խարուսիկ չէ) ցույց է տալիս հայոց լեզվի բառերի այն սասը, որ կապվում է հնդեվրոպական որոշ լեզուների հետ: Դրանցից տասնյակավոր բառերն ու բառարմատները կապվում են միաժամանակ վրաց և կովկասյան մյուս լեզուների հետ, որոնց կրողները դարեր շարունակ հարևանություն, ամենամոտ շփումների ու փոխհարաբերությունների մեջ են եղել հայ ժողովրդի հետ: Նման բառերի թիվը քիչ չէ, որոնք, մեծ մասամբ, գալիս են վաղագույն ժամանակներից, երբ հայոց լեզուն, այսպես կոչված, նախապատմական շրջանից անցած է արդեն պատմական շրջանը (նախագրավոր շրջանը) և իր բառային ֆոնդին ու լեզվական տարրերին ավել է իրեն (հայերենին) հատուկ ձևավորում՝ զարգացման ներքին օրենքների համաձայն: Նման բառերից են, օրինակ՝

1) Հյ. առու=վրց. րօղ (րու ժն. նշ.ձ). սա կապում են սանսկ. sra-vauati, հ. պրսկ. rauta, հուն. hrofos, լիթ. srava, հ. սլ. struya, ն. գերմ. strom, հ. իսլ. sruth ձևերի հետ:

2) Հյ. արծիվ կամ արծվի=վրց. արծիւց-ի (արծիվ-ի ժն. նշ.ձ). սա կապում են միայն սանսկ. r̥jīpya, իրան. arəzifya ձևերի հետ:

3) Հյ. բառ կամ բարի=վրց. ծար-ի (բար-ի ժն. նշ.ձ). սա կապում են սանսկ. bharī, իրան. bēra, հուն. pharo, լատ. ferio, լիթ. b'orū, հ. սլ. briti, հ. գերմ. bora, հ. իսլ. bern ձևերի հետ:

4) Հյ. բուլկ=վրց. ծոլոկ-ի (բուլկ-ի ժն. նշ.ձ). սա կապում են հուն. phy'llon?, լատ. folium, հ. գերմ. blat, հ. իսլ. blath ձևերի հետ:

5) Հյ. գալլ=վրց. ց-ցըլ-ի (մ-գել-ի ժն. նշ.ձ). սա կապում են սանսկ. vr'ka, իրան. vāhrka, հուն. ly'kos, լատ. lupus, լիթ. vilkos, հ. սլ. vluku (ռուս. волк), գոթ. vulfs, հ. իսլ. fael ձևերի հետ:

6) Հյ. գարի=վրց. խըր-ի (քեր-ի ժն. նշ.ձ). սա հարցականի տակ կապում են պրս. zurd (հարցականի տակ), հուն. kri կամ krithē, լատ. hordeum, հ. գերմ. gersta ձևերի հետ:

7) Հյ. գոմ=վրց. չոմ-ի (գոմ-ի ժն. նշ.ձ). սա կապում են միայն դանիերեն gamme ձևի հետ:

8) Հյ. դեղ թխտա || դալ-ար=վրց. Թ-ըլ-ո (մ-դել-ո դաշտի ամեն տեսակ կանաչ, խոտա ըստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի) || ղըլա (դելա թխտա ըստ Ս. Օրբել. վրաց. բառ.). սա կապում են միայն հուն. thalero's կամ (eu) thelen, հ. գերմ. tolun, միջ. իսլ. deil ձևերի հետ:

9) Հյ. բեղի=վրց. տըլա (թելա ժն. նշ.ձ). սա կապում են միայն լատ. tilia, միջ. իսլ. teile ձևերի հետ:

10) Հյ. բե || րու (հմմտ. բեբուք) || վրց. տղ (րու թիե, եթե՞). սա կապում են միայն լիթ. te, հ. սաքս. the ձևերի հետ:

11) Հյ. լաստ=վրց. լաստ-ի (լաստ-ի ժն. նշ.). սա կապում են միայն լիթ. lazdi ձևի հետ:

12) Հյ. լես-ուլ=վրց. կըս-վա (լես-վա ժն. նշ.ձ). սա կապում են միայն սանսկ. clic, լիթ. kliše, հ. սլ. klestiti ձևերի հետ:

13) Հյ. խարշ-ել (>խաշել || խար-ել)=վրց. Խաճ-ցա (խարշ-վաճ ն. նշ.ձ). սա կապում են սանսկ. kundayati, հուն. keramos, լատ. cremo, լիթ. kurti, հ. սլ. kuriti, գոթ. haufi ձևերի հետ:

14) Հյ. կածան=վրց. յաճան-ո (կածան -ի թն. նշ.ձ). սա կապում են միայն ն. սլ. gaz ձևի հետ:

15) Հյ. կոբկոտ=վրց. յոճկոտ-ո (կոբկոտ-ի թծեծած ցորենձ բստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի). սա հարցականի տակ կապում են լիթ. grudas, հ. ս. grudo, հ. սաքս. grut, հ. իռլ. gro ձևերի հետ:

16) Հյ. հում=վրց. ցում-ո (ում-ի թն. նշ.ձ). սա կապում են սանսկ. ama, աֆղ. om, հուն. omos, հ. իռլ. om ձևերի հետ:

17.) Հյ. մոզի=վրց. մոջցի-ո (մոզի-ի թն. նշ.ձ). սա կապում են միայն հուն. moschos ձևի հետ:

18) Հյ. մոլ թծիլ=վրց. մոլ-ո (մոլ-ի թնոր՝ դալար խոտձ բստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի), սա կապում են միայն հուն. molouo ձևի հետ:

19) Հյ. մունջ=վրց. մոջց-ո (մունջ-ի թհամբձ բստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի). սա կապում են սանսկ. mūka, հուն. myndos, լատ. mutus ձևերի հետ:

20) Հյ. նավ=վրց. նաց-ո (նավ-ի թն. նշ.ձ). սա կապում են սանսկ. nau, իրան nava, հուն. naus, լատ. navis, հ. իսլանդ. nör, հ. իռլ. nau ձևերի հետ:

21) Հյ. ոստ=վրց. օտ-ո (շտո թն. նշ.ձ). սա կապում են միայն հուն. ozos ու գոթ. asts ձևերի հետ:

22) Հյ. որբ=վրց. օրբ-ո (օրբ-ի թն. նշ.ձ). սա կապում են հուն. orpho, լատ. orbus, գոթ. arbi, հ. իռլ. orbe ձևերի հետ:

23) Հյ. ուրուր=վրց. օրուր-ո (օրու-ի թն. նշ.ձ). սա կապում են հուն. ornis, լիթ. erelis, հ. սլ. orblu, գոթ. ara, հ. իռլ. irar ձևերի հետ:

24) Հյ. սար=վրց. սեր-ո (սեր-ի թսարձ բստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի). սա կապում են սանսկ. śira, իրան. sarah, հուն. kara, լատ. cerebrum, հ. իսլանդ. hiarse, կելտ. (բրտոն) kern ձևերի հետ:

25) Հյ. սարդ=վրց. ճարդ-ո (գարդի-ի, հմմտ. դեղա-գարդի-ի թմայր սարդձ բստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի). սա կապում են միայն սանսկ. crⁿ khala և հուն. kairos ձևերի հետ:

26) Հյ. սոր=վրց. սոր-ո (սոր թորջձ). սա կապում են սանսկ. cvāyate, իրան. sūra, հուն. kyar, լատ. caverna, լեթվերեն sawa, հ. իռլ. cūa ձևերի հետ:

27) Հյ. տիկ ժայծ, այծի մորթիձ=վրց. Ծոց-ան-ո (տիկ-ան-ի || ցիկ-ան-ի ժայծ, ուլձ). սա տարածված է կովկասյան լեզուներում սկզբնական նշանակությամբ. սա կապում են միայն հուն. diza, հին սաքս. ticcen ձևերի հետ:

28) Հյ. տրտունջ=վրց. Ծրժոց-ո (դրտվիկա թն. նշ.ձ). սա կապում են սանսկ. dardura, հուն. darda, լիթ. dardėti, բուլգ. dūrdōru, հ. իռլ. dord ձևերի հետ:

29) Հյ. գոլ թկիսատաքձ (հմմտ. գաղջ)=վրց. ճալ-ցա (գվալ-վա || գոլ-վա թանանձրև եղանակ, երաշտձ բստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի). սա կապում են միայն լիթ. vildau, հ. սաքս. waela ձևերի հետ և այլն, և այլն: Նման բառերի թիվը քիչ է:

Հայերենի հետ ունեցած վրացերենի այդ կապն անմիջական է և մեծ մասամբ գալիս է հնագույն ժամանակներից, ամենամոտ շփումների ու փոխհարաբերությունների հետևանքով, որ առնչված է հայոց լեզվի պատմական շրջանի հետ: Սա պարզ երևում է նրանից, որ վրացերենը մինչև նույն բառերը շատ անգամ պահպանել է սկզբնական կամ հին նշանակություններով: Այսպես, օրինակ, հյ. դեղ *զղեղորայք*՝ բառը նախապես թխոտ, դայարք է նշանակել (հմմտ. *էլիզանիցե արջառ զղեղ դայար ի դաշտիք. այստեղ՝ դեղ դայար = խոտ դայար*), որից պատրաստվել է *զղեղ, դարմանք*, որպես բուժիչ միջոց (որ երկրորդական իմաստ է). հայերենից յուրացված վրց. *დელა* (դալա *թխոտ*) և *მ-დელ-ო* (մ-դել-ո *զգաշտի ամեն տեսակ կանաչ, խոտ*) բառերը, ինչպես տեսնում ենք, պահել են նրանց արտահայտած նախնական իմաստը:

Մի այլ օրինակ էս: Հյ. տիկ, տկ-նոր (-նոր մասնիկով) բառերը նշանակում են այծի և սովորաբար կենդանիների մորթի (որ, որպես աման, օգտագործվում է գինու, պանրի և այլ մթերքների համար, բայց նախապես նշանակել է *ալծ, կենդանի*): Այս իմաստով պահպանված են սրա վրաց. և կովկասյան մյուս համարվածքները (ճան. տիկ-ան-ի = *վրց. թիկ-ան-ի կամ ցիկ-ան-ի ալծիկ, ուլք, ինչպես նաև՝ բուր-ցիկ-ի ալծյամք, վա-ցիկ-ի կամ վա-ցի թորձ ալծք, այլև՝ բա-տկ-ան-ի զգառք կամ բա-տիկ-ի զմատ-դաշ ալծ, ուլք, նաև՝ մեգր. բա-տիկ-ի կամ բա-տիկ-ա < բա-տիկ-ան-ի ձևից կամ էլ՝ բա-տի-ա զմի տարեկան էգ ալծք և այլն*: Այս նույն տիկ բառարմատը տեկ կամ տիգ ձևով տարածված է նաև հյուս. կովկ. լեզուներում և այլն, բոլորն էլ արտահայտելով ընդհանրապես կենդանու՝ *այծի, ուլի, ոչ-խարի, գառան և այլ շորքոտանիների գաղափարը*: Տիկ արմատի հետ պետք է կապել նաև վր. *ტყავ-ო* (տղ'ավ-ի < *տկ-ավ-ի < *տիկ-ավ-ի *ժմորթի*), հմմտ. ուս. *КОЗА՝ ալծք և КО'ЖА ժմորթի*): Իմաստի բազմազանություն և նություն հետ միասին կովկ. լեզուները տիկ կամ ցիկ բառարմատին միացած պահել են նաև *ռա-(օրինակ՝ բա-տիկ-ի ձևի մեջ)* և *վա-(օրինակ՝ վա-ցիկ-ի ձևի մեջ)* նախամասնիկները, որոնք երբեմնի քերականական սևոր կամ դասի ցուցանիշներն են¹:

Պրոֆ. Աճառյանը (ՇՀայոց լեզվի պատմություն, հ. 1-ին) հյ. տիկ բառը կապում է միայն հուն. *cliza* և սաքս. *ticcen* ձևերի հետ, հնգևվրոպական նախնական ձևը համարելով *clig* *ալծ, ուլք իմաստով*: Եթե այս այսպես է, ապա կովկ. լեզուները տիգ *ալծք* ձևով (և նման շատ ուրիշ ձևերով) կապվում են հայոց լեզվի ոչ միայն պատմական (նախադրավոր) շրջանի, այլև նախապատմական շրջանի հետ, երբ գեուես հայ ժողովուրդը ձևավորված չէր:

Այստեղից պարզ է, որ հայ ժողովուրդը գեուես հնագույն ժամանակներից ամենամոտ շփումների ու փոխհարաբերությունների մեջ է եղել վրաց և մյուս հարևան կովկասյան ժողովուրդների հետ, որոնք այդ ընթացքում հայերենից յուրացրել են իրենց բառային կազմի և նրա հիմքը հանդիսացող բառային հիմնական ֆոնդի որոշ տարրերը:

¹ Ինչպես ցույց է տալիս *ակագ. Իվ. Ջավախիբվիլին «Վարթվելյական և կովկասյան լեզուների ամենասկզբնական բնույթն ու ազգակցությունը»* ստվարածավալ աշխատության մեջ (վրաց լեզվով, 1937, Թբիլիսի):

Հայերենն էլ, իր հերթին, վրացերենից և կովկասյան մյուս լեզուներից յուրացրել է և նմանապես իր բառային կազմն է հարստացրել մի շարք բառերով, ինչպիսիք են, օրինակ, բալ (— վրց.՝ ճան, բալ-ի), զավառ (= վրց. զվար-ի քցեղ, տոհմ, ազգ, բնառնիք), գդակ (= վրց. քուլ-ի), գուրաջ || գուրան (= վրց. գուրան-ի, թուշ, գուրա), լակոտ (= վրց. լեկվ-ի, ճան, լակոտ-ի), խոն-կոր (= վրց. գոն-ի, դոր-ի),¹ խոփ (= վրց.՝ մեզր, խոփ-ի, ճան, խոփե), ծիծ կամ ծուծ (= վրց. ծուծու), ճանն (= մեզր, ճանչ-ի, ճան, ճաչ-ի, վրց. ծեր-ի), մշակ (= վրց. մուշակ-ի, մուշա), շլան (= վրց. շլամ-ի), ոչխար (= վրց. ցխովար-ի, ճան, շխուր-ի, մեզր, շխուրի), փոցխ (= վրց. փոցխ-ի), փարխ (= վրց. փարեխ-ի), փշուր || փշրել || փոշի (= վրց. փշեր-ի), փուխր || փխրել (— վրց. փխուրա) և այլն²։

Վաղագույն ժամանակներից եկող հայոց և վրաց լեզուների կապերը, հատկապես բառերն ու բառաբանությունները այսօր հավասարապես մանուկ են հիշյալ լեզուների բառային կազմերի մեջ, դալով պատմական ժամանակաշրջանից և դարերի ընթացքում լինելով մեծ մասամբ կենսունակ ու գիմացելուն՝ կազմել են միաժամանակ մեզ հետաքրքրող երկու լեզուների բառային հիմնական ֆոնդերի որոշ տարրերը՝ հիմք տալով նրանց նոր բառերի կազմության համար։

Նման բառերի թիվը քիչ չէ հայոց և վրաց լեզուներում, որ իրենց հնությամբ ու կենսունակությամբ հաճախ հեռու են մնում հույնիսկ այնպիսի բառերից, որոնք հայերենին անցել են, այսպես ասած, նախապատման շրջանից և ումանց կողմից համարվում են հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդի «կառնուղղուն» կամ «ավելի էական» մասը։ Վերևում բերած և նման ուրիշ բառերի ծագումը հայերենից կամ վրացերենից (կամ էլ մի այլ լեզվից) համարելը երբեմն հույնիսկ կարող է խարուսիկ լինել։ Իրա հեռ միասին՝ հաճախ դժվար է, կամ բոլորովին անկարելի է մանավանդ խոր հնագրից եկող բնագնանուր բառերի սկզբնաղբյուրը գտնել հենց այն պատճառով, որ այն լեզուները, որոնք մեծ մասամբ այդ բառերի համար սկզբնաղբյուր են հանդիսացել հայոց և վրաց լեզուներին, խաչավորումների տեսական պրոցեսում պարտվող գուրա գտլով և աստիճանաբար կորցնելով իրենց սրակը՝ մահացել ու գուրա են եկել պատմության ասպարեզից, կորչելով անհետ ու անհիշատակ (գիր ու գրականություն չունենալու պատճառով)։ Հայերենի մեջ խաչավորվել են, օրինակ, զտնազան կովկասյան մանր ցեղեր, որոնք հայերին տվել են, անշուշտ, իրենց լեզվի որոշ բառերն ու արտահայտությունները։ Նման ցեղերից էին, օրինակ, հյուսիսարևելքից ուտեացիք և աղվանները, որոնք հայոց լեզվի բառային կազմը հարստացրել են որոշ չափով հյուսիսային կովկասյան լեզուների բառերով, և հյուսիսարևմուտքից՝ գուգարացիք և տալեցիք, որոնք հայոց լեզվի բառային կազմը հարստացրել են նմանապես որոշ չափով հարավային կով-

¹ Խոն-կոր բառը կազմված է երկու բառից՝ խոն-«խոզ»-կոր «ձագ» (վերջինիցս և՛ կոր-յուն «առյուծի ձագ», լակոտ, կոր-նակ և այլն), որի երկրորդ մասը՝ կոր < կվար || կուար «ձագ, որդի» իմաստով պահպանված է կովկ. մի շարք ազգանունների վերջին մասում «որդի» նշանակությամբ (վերջին Ե հնչյունի անկումով և սկզբի կ հնչյունի տարատեսակումով) = վրց. Եվլի, ձե «որդի», ինչպես, օրինակ, Վե-կուա «Վեի որդի», Չի-գուա, Սի-գուա, Թալա-կվա «Նե, Բո-խուա, Բո-լվա», Աթլա-գվա և այլն։

² Տես չ. Ա. ճ ա ո յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, 1940, էջ 212-213։

կասյան լեզուների բառերով: Հայերենի հնագույն որոշ ընդհանուր բառերը, որ միաժամանակ գտնվում են վրացերենի և կովկասյան մյուս լեզուների մեջ, ունեն, անշուշտ, իրենց ծագման աղբյուրը, բայց դա մեզ ծանոթ և այսօրվա կենդանի լեզուներից ոչ մեկը չէ:

Այսպիսով, պարզ է, որ մենք այդ սկզբնաղբյուրը բոլորովին կամ որոշակիորեն չենք կարող գտնել: Այդ է պատճառը, որ նույնիսկ միևնույն մեթոդներով աշխատող տարբեր գիտնականներ հաճախ իրար հակամեծ կարծիք են արտահայտում հայոց և վրաց լեզուների մի շարք ընդհանուր բառերի ծագման մասին: Այսպես, օրինակ, պրոֆ. Աճառյանի կարծիքով լորձն (=վրց. լորձո), խոց-խոցել (=վրց. խոց-վա), կալ (=վրց. կալո), ցեխ-ցեխել (=վրց. ցեխվ-ի) և այլն հայերենից են փոխառյալ վրացերենում¹, մինչդեռ նորվեգացի արևելագետ-լեզվաբան H. Vogt-ը, ընդհակառակը, այդ նույն բառերը համարում է վրացերենից փոխառյալ հայերենի մեջ², Այնուհետև՝ պրոֆ. Աճառյանը, օրինակ՝ հայ-վրացական մի շարք ընդհանուր բառերի ծագման մասին ասում է՝ «Եկան շատ այնպիսի բառեր, որոնց համար կարելի չէ ասել, թե ով է փոխառու և ով է փոխառուն, գոնե եթե ուզենանք վերարկվել գիտական սկեպտիկ վերաբերմունքով: Այսպես, օրինակ, ծալք բառը գտնում ենք նաև վրացերենի մեջ ծվերի ձևով, բայց վճռել՝ թե սրանցից որն է փոխառյալ՝ կարելի չէ»³:

Այսպիսով, հայոց և վրաց լեզուների ընդհանուր այն բառերը, որոնք գալիս են մի երրորդ լեզվից, որը գեղեցիկ մաղագույն ժամանակներում խաչավորումների տեսական պրոցեսում պարտավոր դուրս գալով՝ վաղուց արգեն կորել է անհետ-անհիշատակ, պարզ է, որ դժվար է, կամ, ավելի ճիշտ, անկարելի է որոշել, թե որ լեզվից են գալիս, թեև դրանք կազմում են մեզ հետաքրքրող երկու լեզուների պատմական շրջանի բառային կազմի կենսունակ տարրերը՝ մտնում են նրանց բառային հիմնական ֆոնդի մեջ և հիմք են տալիս նրանց նոր բառերի կազմության համար: Նման ընդհանուր բառերից են նաև, օրինակ, հյ. ծիրան=վրց. յեղած-ո (ներամ-ի ծնունդն հշ.ձ, հմմտ. արիագ. աճարամ), հյ. կար-ել=վրց. յեղ-վա (կեր-վա ծկարել), հյ. խեց-ի=վրց. յեց-ի (կեց-ի ծկալ, թրծած կալ), հյ. ծեփ=վրց. ֆեծո (ծեփ ծնունդն հշ.ձ), հյ. տան-ել || տար-ել=վրց. Թան-յեծ || Թան-յեծ (տան-երա || տար-երա ծտանել, ուղարկել), հյ. ծոր-ել ծոսել, քամվել=վրց. ֆյոր-յեծ (ծուր-վա), կորդ || կոշտ=վրց. յոր-ո (կորդ-ի), հյ. լուրջ || լուրթ=վրց. Լյոր-ջ-ո (լուրջ-ի ծկապույտ), հյ. զալատոգ=վրց. Ծալատ-ո (զալատոգ-ի || կալտոգ-ի ծորմագիր) և այլն:

Հայոց լեզվի բառային կազմից շուրջ մեկ հազար բառ, ինչպես հայտնի է, ծագումով անծանոթ է, թեև դրանց մի զգալի մասը կապվում է վրաց և մյուս կովկասյան լեզուների հետ և... Մինչև այժմ չի հաջողվել որոշել հայերեն լեզվի մեջ եղած բառերի այն ստվար մասը, որոնց ծագումը անձանաչելի է, — գրում է Մեյեն: — Դրանք, — ենթադրում է նա, — առաջացած կլինեն տեղական լեզուներից⁴: Բայց թե որ լեզվից, դժվար է ասել:

¹ Հ. Աճառյան, Արմատական բառարան:

² H. Vogt, Armenien et caucasique du Sud, 1938, էջ 330-333:

³ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 1940, հ. I, երես, էջ 210:

⁴ A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique (Vienne, 1903 թ.) աշխատության ներածությունը (§ 2):

Դեռ ավելին. միևնույն բառը կարող է լինել ոչ միայն երկու լեզվի, այլև մի շարք լեզուների ինչպես բառային կազմի, այնպես էլ նրանց բառային չիմնական ֆունկցիոնալ մեջ: Լինելով հնագույն բառերից և գալով գեոևս նախապատմական շրջանից՝ այդ բառը դարերի պատմություն է ունենում և բոլոր լեզուների մեջ էլ խիստ կենսունակ է լինում, բայց, այնուամենայնիվ, գծվար է նրա ծագման աղբյուրը գանել: Այս անսակեռից բավական լայն տարածում ունի, օրինակ, գինի բառը. սա տարածված է ինչպես ոչ հնդեվրոպական, այնպես էլ հնդեվրոպական լեզուներում, օրինակ՝ հյ. գինի = վրց. ԼՅՈԵՆ (դվինո, մեգր. դվինի, ճան. դուինի || դինի, թուշ. վեն, հմմտ. վրց. վեն-ախ-ի «գինու՝ խաղողի ալգի») = ռուս. вино բառերի ձևա-իմաստային համարժեքներն են՝ երբ. yain, եթովպ. wein, արար. wain, ասորեստ. inu, հուն. ioīnos «գինի», oinē «խաղողի որթ», պրան. véné, լատ. vinum, գոթ. — գերմ. wein, հ. գերմ. wīn, անգլ. wene, հ. իռլ. fīn, կիմբ. gwin և այլն:

Հնագույն բառերից են նաև և համասարապես մտնում են ոչ միայն մեզ հետաքրքրող երկու լեզուների, այլև ուրիշ շատ լեզուների բառային կազմի մեջ. օրինակ՝ հյ. փանդիոն (նաև՝ բանդիոն կամ բամբիոն «հին հայ վրայասանների նշանավոր երաժշտական գործիք») — վրց. ԾՅԵԾԾԻՐ-Օ (փանդուր-ի, թուշ. և չեչեն. փանդուր «լարավոր նվագարան») = լյուդիարեն pandura, pandurion, panduris «երեք լարով քնար», օսեր. fondur, fondir «երկու լարով նվագարան», հուն. pandura, panduron «երեքաղյան քնար», լատ. pandura և թրք. pandura, բուլգ. pandura, սերբ. pandura, pandur, bandur, ուկրաին. banduro «լարավոր նվագարան կամ կիթառ» և այլն: Այնուհետև՝ հյ. աղիւս = վրց. ՁԼՈՆ-Օ (ալիգ-ի «չխրծված աղյուս»), այլև՝ պրսկ. axīr, փոքր-ասիական alips «ժայռ» և այլն. հյ. ագարակ = վրց. ՁԶԾԶԶ-Օ (ագարակ-ի «հունյն նշ.»), հմմտ. վրց. Ագարա տեղանունը), այլև սում. agar «գաշտ», հուն. agros, լատ. ager, սանսկ. ajra և այլն. հյ. ընկույզ = վրց. ՃՈՅԾԾ-Օ (նիգոգ-ի «ն. նշ.»), որ տարածված է փոքր-ասիական շատ լեզուներում և այլն:

Դամ թե չէ, մի շարք բնահանուր բառեր, որ գալիս են դարերի խորքից, կազմելով հայոց և վրաց լեզուների պատմական ժամանակաշրջանի բառային կազմի տարրերը՝ միաժամանակ կապվում են մի շարք հին լեզուների հետ, բայց այնուամենայնիվ որոշակի չէ նրանց սկզբնաղբյուրը: Այսպես, օրինակ՝ հյ. թոնիր = վրց. ԾՈՐՆԻ (թոնն || թոնն «հունյն նշ.»), որ տարածված է ամբողջ Արևելքում [բոլորի մայրը ոմանք համարում են սեմականը, որից անցած են համարում իրանյաններին և այնտեղից էլ՝ թուրքական ժողովուրդներին, իսկ պրոֆ. Աճառյանը հայտնում է այն կարծիքը, որ փոխառությունը կատարված է ասորերեն tīnūr անից, որ անցած է համարում, նախ խալդեաներին և այնտեղից էլ՝ հայերին]: 2) հյ. կիր = վրց. ԶՈՐ-Օ (կիր-ի «հունյն նշ.»), այլև կովկ. մյուս լեզուներում (ճաներեն, թուրքերեն, ինգուզերեն, չեչեներեն և այլն), որին շատ մոտիկ են հնչում սեմական լեզուների, օրինակ՝ արամ. և եբրայեց. gīr, արար. jir և սարեական gīr հոմանիշները (բայց ասորերենում չի պահպանված). 3) հյ. քաղաք = վրց. ԽԼԾԾ-Օ (քալաք-ի «հունյն նշ.»), ոմանք համարելով ասուր.

¹ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, 1940, էջ 196.

kalakku սպարիսս, շրջասպարիսս, դարավանդ՝ բառից ծագած... և այլն, և այլն¹։

Բայց սա չի նշանակում, թե հայոց և վրաց լեզուներում եղած բնդհանուր գործածական բառերի ծագումն բնդհանրապես նախափոր չէ պարզել։ Բնդհանուր բառերի տյն մասը, որ իրարից են վերցրել ամենամոտ շփումների և փոխհարաբերությունների շնորհիվ երկար դարերի բնթացքում, հաջողվում է պարզել, երբ նրանց մոտենում ենք իրենց կազմության ու գործածության յուրահատկության տեսակետից։ Այդ կարելի է պարզել մի շարք միջոցներով²։ Վերցնել այն բառերը, որոնք հայկական կազմություն ունեն, ինչպես, օրինակ, հյ. նյուր (հին՝ նիւր) = վրց. նուր-ո (նիվր-ի ժնույն նշ.ձ), որ կազմված է՝ հյ. նի-մասնիկով-հիւր արմատից, կամ էլ՝ հյ. արտավար = վրց. արտաճար-ո (արտավար-ի ժ փթանոց չափ), որ կազմված է՝ հյ. արտ + վարել բառերից, և այլն։ Նման բառերը, բնականաբար, հայերենից են անցած վրացերենին. հայերենից են անցած վրացերենին նաև այն բնդհանուր բառերը, որոնց ծագումը ակնհայտորեն նդերոտական է. այսպես, օրինակ՝ հում = վրց. շմ-ո (ում-ի ժնում.ձ), հյ. նավ = վրց. նავ-ո (նավ-ի ժնավ.ձ) և այլն, և այլն, ինչպես նաև՝ այն բնդհանուր բառերը, որոնք թե կազմությամբ և թե ծագումով հայկական են, օրինակ՝ հյ. հասակ (= հաս + ակ՝ հաս-ան-ել բառից և -ակ մասնիկով) = վրց. ճնայ-ո (ասակ-ի ժհասակ, տարիք, բարձրություն, մեծություն), որից՝ վրց. ասակովան-ի ժհասակավոր, տարիքավոր, ուսակո ժանչափահաս և այլն։

Մյուս կողմից՝ վրացերենից կամ կովկասյան լեզուներից հայերենին են անցել այն բառերը, որոնք, բնդհանրապես, ունեն վրացական կամ կովկասյան կազմություն, այսպես, օրինակ, հյ. ոչխար բառը, որի համարմեքն են՝ ճան. չխուր-ի, մեգր. շխուր-ի, վրց. Շխուր-ո (ցխովար-ի ժոչխար), որից՝ ցխովր-եքա ժկյանք, ցխովել-ի ժկենդանի և այլն, ինչպես նաև՝ հյ. նան = մեգր. նանջ-ի || ճան, մնաջ-ի, վրց. Մնջ-ո (մեր-ի ժճանճ, որի ճան. — մեգր. ննչյունական դրսևորումն է մնաջ-ի || նանջ-ի՝ ծ > ն և ռ > ջ փոխանցումով)։ Վրացերենից հայերենին են անցել նաև այն բառերը, որոնք հայերենում սահմանափակ կամ տեղական գործածություն ունեն, ավելի ուշ հանդես գալով հայ մատենագրության մեջ, մինչդեռ վրացերենում լայն տարածում ունեն և հանդես են եկել ու հանդես են գալիս բազմազան ձևերով։ Այդպիսի բառերից են, օրինակ՝ ծես բառը, որ շատ ուշ է հանդես եկել հայ մատենագրության մեջ և բարդ ձևեր էլ չունի (եթե հազվի չառնենք նոր դրական հայերենի կազմությունները՝ ծիսակատարություն, ծիսական, ծիսարան, հայածես, հունածես և այլն), մինչդեռ վրացերենում սովորական են եղել՝ Մնջ-ո (ծես-ի ժկարգ, կանոն, բնության օրենք, եկեղեցական ծես, սովորություն, բնավորություն, բարք), որից՝ սանծեսերա || գածեսերա ժկարգադրել, կարգավորել, հաստատել, դածեսերա ժհիմնադրել, կանոնադրել, նշանակել, մոծես

¹ Որոշ բնդհանուր բառեր մի ժամանակ մտնելով հայոց և վրաց լեզուների պատմական ժամանակաշրջանի բառային կազմի և միաժամանակ նրանց բառային հիմնական ֆոնդի մեջ, բնական է, որ ժամանակի բնթացքում այս կամ այն լեզվի բառային կազմից կարող են դուրս բնկնել, որպես նախած բառեր, այսպես, օրինակ՝ հյ. մաղխազ — վրց. մաղխան-ո (մաղխազ-ի)։ որ ասուր. malxazu ժիշխան բառից են համարում ծագած (հարցականի տակ), դուրս է եկել հայոց լեզվի բառային կազմից, որպես նախած բառ։

² Հմմտ. Հ. Ա. ճ ա ո յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, էջ 206—210։

«Կանոնավոր, արեղա, քահանա», ուժեղ առական, անկարգ, խառնակ, ուժեղ առական կարգություն, խառնակություն» և այլն, և այլն:

Հայոց լեզվի բառային կազմը պատմական ժամանակաշրջանում (ինչպես նախագրավոր, այնպես էլ գրավոր շրջանում) հարստացել է նաև մյուս հարևան ժողովուրդների հետ ունեցած հայ ժողովրդի քաղաքական և կուլտուր-տնտեսական (ուղղակի թե անուղղակի) կապերի ու փոխհարաբերությունների շնորհիվ: Այդ շփումների հետևանքով բառերի մի զգալի մասը հայոց լեզուն յուրացրել է իրանյան, սեմական, հունական և այլ լեզուներից և հարստացրել իր բառապաշարը: Վրաց լեզուն էլ այդ լեզուներից, ուղղակի թե անուղղակի յուրացրել է իր հերթին, բառային կազմի որոշ մասը: Երկու լեզուների այդ յուրացված բառերը հաճախ զուգադրվում են իրար, կազմելով որոշ կարգի ընդհանրություններ: Հայոց և վրաց լեզուների այդ կարգի ընդհանրությունները, որ առաջ են եկել տարբեր ժամանակներում ու շրջաններում և տարբեր լեզուներից, համեմատաբար ավելի նոր են և մեծ մասամբ հայտնի՝ ծագման տեսակետից:

Այդ բառերը մտնելով հայոց և վրաց լեզուների բառային կազմը՝ հաճախ այնպիսի կենսունակություն են ձեռք բերել, որ դարձել են նրանց բառային հիմնական ֆոնդի կարևորագույն կամ էական տարրերի մի մասը: Այսպիսով, ուրեմն, այդ բառերը դուրս են գալիս մի լեզվի բառային կազմի, ինչպես նաև նրա բառային հիմնական ֆոնդի սահմաններից և դառնում են միաժամանակ մի քանի լեզվի (այս դեպքում՝ երեք լեզվի) բառային կազմի, ինչպես նաև նրանց բառային հիմնական ֆոնդի որոշ տարրերը՝ հաճախ ձևա-իմաստային տարբեր փոփոխություններով կամ երանգավորումներով:

Սովորաբար լեզվի բառային կազմի, ինչպես նաև նրա բառային հիմնական ֆոնդի տարրերի իմաստային փոփոխությունները կամ նրանց իմաստի հնացումը (մահացումը) կարելի է շոշափելիորեն գիտել միայն գրավոր շրջանում, գրական հուշարձանների և նրանց հիման վրա կազմված տարրերի բառարանների օգնությամբ:

Նախագրավոր շրջանի լեզվի բառային ֆոնդի կամ բառային կազմի նման փոփոխությունները երբեմն կարելի է նաև ենթադրաբար վերականգնել մյուս լեզուների համեմատությամբ և հնչյունական որոշ օրենքներով (դա վերաբերում է լեզվի, այսպես կոչված, նախապատմական շրջանին): Հայոց և վրաց լեզուներն այս տեսակետից ունենալով դարավոր գիր ու գրականություն, այդ փոփոխությունները (բառիմաստի զարգացումն ու հնացումը) հնարավոր է գիտել նրանց գրավոր շրջանի տարրերի փոփոխումից հիս, միջին ու նոր (նախասովետական և սովետական): Այդ փոփոխություններն են՝ բառիմաստի զարգացումը, մի իմաստի հնացումն ու նոր իմաստի առաջացումը, նոր բառերի երևան գալը (ներքին բառակազմական միջոցներով և փոփոխություններով), հնացած բառերի դուրս ընկնելը գործածությունից և այլն:

Տարբեր լեզուներից յուրացված բառերը (որ կրերենք ստորև), նախքան հայոց և վրաց լեզուների կոզմից նրանց յուրացումը, բնականաբար, չեն եղել մեզ հետաքրքրող երկու լեզուների ոչ բառային կազմի և ոչ էլ նրանց բառային հիմնական ֆոնդի մեջ: Նրանց համարժեք ձևերը հայոց և վրաց լեզուներում կամ եղել են, կամ էլ չեն եղել: Եթե եղել են, ապա այդ հա-

մարմնքները, մի կողմից, իմաստի փոփոխությամբ կամ զարգացումով տարբերակվել են նրանցից և, մյուս կողմից, իմաստի հնացումով կամ մահացումով դուրս են եկել բառարանից (գործածությունից)։ Եթե դա կատարվել է նախագրավոր շրջանում, ապա այդ հնացած բառերը կորել են անհետ, հիշատակված չլինելով գրական հուշարձաններում (կամ ժողովրդական հին բանահյուսության մեջ)։ Այսպիսով, լեզվի բառային կազմը, ինչպես նաև նրա հիմքը հանդիսացող բառային հիմնական ֆոնդը (որ համեմատաբար ավելի դանդաղ է փոխվում) խիստ պատմական է և առավել զգայուն փոփոխությունների նկատմամբ, կապված լինելով մարդու արտադրական գործունեության հետ, ինչպես և ամեն մի այլ գործունեության հետ, նրա աշխատանքի բոլոր ոլորտներում։

Հայոց և վրաց լեզուները, սկսած հնագույն ժամանակներից, քաղաքական և կուլտուր-տնտեսական շփումների և փոխաբարերությունների հետևանքով իրենց բառային կազմը, ինչպես և բառային հիմնական ֆոնդը, այս կամ այն չափով, համալրել են տարբեր լեզուների որոշ բառերով։ Օրինակ՝ հայոց լեզուն իր բառային կազմը համալրել է շուրջ 1.400 իրանական բառերով¹, տարբեր բնագավառներից. գրանք են, մեծ մասամբ, կրոնական ու պետական կազմի, ռազմական, բույսերի ու ծաղիկների, գույների, գիտություն ու գեղարվեստի, վաճառականության ու գործիքների, չափերի ու դրամների, շինություն, մետաղների ու հանքերի, հագուստեղենի ու արդուզարդի, ուտելիքների և այլ անուններ։ Այդ բառերի մի զգալի մասը զուգադիպում են հայոց և վրաց լեզուներում, որ հայոց և վրաց լեզուները յուրացրել են իրանյանից ուղղակի կամ անուղղակի ձևով։ Այդ բառերը տարբեր լեզուներում կրել են ձևա-իմաստային որոշ փոփոխություններ։ Դրանք հաճախ շատ կենսունակ են ու մտնում են երկու լեզվի ոչ միայն բառային կազմի, այլև նրանց հիմքը հանդիսացող բառային հիմնական ֆոնդի մեջ։

Դրանցից են, օրինակ՝ հյ. բամբակ=վրց. ծամծա (բամբա)=պհլ. pambak. հյ. բրինձ=վրց. ծրոծջ-ո (բրինջ-ի)=պրսկ. birinj, հյ. գանձ=վրց. ջանձ-ո (գանձ)-ի=պրսկ.-պհլ. ganj, հյ. գուսան=վրց. թ-գոսան-ի=պրսկ. gosān. հյ. դև=վրց. լոջ-ո (դև-ի, հմմտ. դև-գմիր-ի սղև-հակաք)=պրսկ. պհլ. dev. հյ. դոխ-ք=վրց. չոջոխ-եր-ի)=պհլ. dozax, գնդ. dozax. հյ. ժանգ=վրց. յանջ-ո (ժանգ-ի)=պրսկ.-պհլ. zang. հյ. լախտ=վրց. լանդ-ո (լախտ-ի)=պրսկ. laxt. հյ. կամար=վրց. յամար-ա (կամարա=պրսկ.-պհլ. kamar, գնդ. kamara, հյ. կանփ=վրց. յանփ-ի)=պրսկ. kanab. հյ. կերպ=վրց. յերփ-ի)=պհլ. kerp, հյ. մարգարե=վրց. մե-մարգ-ե (մե-մարգ-ե)=պհլ. margar. հյ. նշան=վրց. նոճան-ո (նիշան-ի)=պրսկ. պհլ. nišan. հյ. շաքար=վրց. ջախ-ո (շաքար-ի)=պրսկ. šakar, հյ. պապ=վրց. թաթա (պապա)=պրսկ. bab, պհլ. *pap, հյ. պատիվ=վրց. թաթոց-ի (պատիվ-ի)=պհլ. pativ, հյ. պղպեղ=վրց. թոլթոլ-ի (պիլպիլ-ի)=պրսկ. pilpil. հյ. պողպատ=վրց. փոլադ-ի)=պրսկ. polad. հյ. վաճառական=վրց. ղաճար-ո (վանադ-ի)=պհլ. vačar. հյ. վիշապ=վրց. յեճապ-ի, հմմտ. գվելեշապի)=պհլ.* vešap, գնդ. višāpa. հյ. տանաք=վրց. ղաճար-ի (տանաք-ի)=պրսկ. tašar. հյ. տոհմ=վրց. ղոմ-ի (տոմ-ի)=պհլ. tohm, հյ.

¹ Հմմտ. հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմ., հ. 1-ին, 1940 թ., գլուխ Ժ։

փիղ=վրց. 𐭪𐭣𐭥𐭭 (ս-պիլ-ու)=պրսկ.-պհլ. pil. հյ. փող «դրամ»=վրց. 𐭪𐭣𐭥𐭭 (փուլ-ի)=պրսկ. pul. հյ. քսակ—վրց. 𐭪𐭣𐭥𐭭 (քիսա)=պրսկ. kīsa և այլն, և այլն.

Կան նման չափ ու չափ ընդհանուր բառեր ու արտահայտություններ, որ վաղադույն ժամանակներից յուրացվել են իրաներենից և կենսունակ են ու առօրյա գործածական նաև այսօր: Համեմատաբար ավելի թույլ շփումների հետևանքով ասորերենից յուրացվել են չափ քիչ բառեր: Դրանցից են, օրինակ, հյ. բարգման—վրց. բարգման-երս=ասոր. targmāna. հյ. կատու=վրց. 𐭪𐭣𐭥𐭭 (կատա)=ասոր. qattu, հյ. կաքավ=վրց. կակաբ-ի=ասոր. qoqqawa, հյ. ձեր=վրց. զեր-ի=ասոր. zeo, հյ. մախար=վրց. մախար-ի=ասոր. məxaxā, հյ. մանգալ=վրց. նամգալ-ի=ասոր. maggəla, հյ. մտրակ=վրց. մաքրախ-ի=ասոր. matraqa, հյ. շաբար=վրց. շաբար-ի=ասոր. šabbe-za, հյ. շամփուր=վրց. շամփուր-ի=ասոր. šappūda, հյ. քուրա=վրց. քուրա=ասոր. kūrā... և այլն, որոնք միայն մտել են հայոց և վրաց լեզուների բառային հիմնական ֆոնդը:

Այս ձևով նաև հունարենից փոխառյալ բառերը, որոնք մեծ մասամբ գրքային ճանապարհով են անցել երկու լեզվին էլ: Նման բառերի թիվը հայ մատենագրության մեջ 900-ից էլ անց է¹, սակայն ճշգրտ մեծամասնությամբ նույն է հունարենից թարգմանված հայ գրականության մեջ (5-ից 12-րդ դարերում) և ոչ մի կենսունակությամբ չունի, ժողովրդից կտրված և վաղուց արվեն մեռած լինելով, հունարենը մեծ ազդեցություն չունեցավ հայոց և վրաց լեզուների վրա, չնայած որ որոշ բառեր համեմատաբար կենսունակ են ու գործածական երկու լեզվում էլ, ինչպես, օրինակ, հյ. բարբարոս=վրց. բարբարոս-ի=հուն. barbaros, հյ. բյուրեղ (հին՝ բիրեղ)=վրց. բրդլ-ի=հուն. beryllos, հյ. եկեղեցի=վրց. էկլեսիա=հուն. ekklesia, հյ. կաղապար (|| գաղափար)—վրց. կալապուտի=հուն. kalapōdion, հյ. կանոն=վրց. կանոն-ի=հուն. kanōn, հյ. մարմար=վրց. մարմարիլո=հուն. marmaron, հյ. միլոն=վրց. միլ-ի=հուն. milion, հյ. նակիմբ=վրց. իակիմբ-ի=հուն. h'akynthos՝ հյ. ստեպլիմ=վրց. ստափիլո=հուն. staphylunos և այլն (ինչպես նաև՝ ամիսների անունները): Հունարենի միջոցով են անցել հայոց և վրաց լեզուներին նաև երրայական մի քանի բառեր, ինչպիսիք են՝ հյ. եղեմ «գրախա»=վրց. էղեմ-ի=երբ. 'ēden, հուն. edem. հյ. հոբելյան=վրց. իուբիլե=երբ. yobel, հուն. iobelos և այլն, ուստի հունական փոխառությունների նման երրայական բառերն էլ կենսունակությամբ չեն ստացած ոչ հայոց լեզվում, ոչ էլ վրացերենում (այդ բառերն անցել են մեզ ոչ թե ուղղակի երրայականից, այլ մ. գրքի հունարեն թարգմանության միջոցով):

Այն ուղղակի և անուղղակի շփումները, որոնց հետևանքով հայոց և վրաց լեզուները մյուս հարևան լեզուներից անմիջաբար թե միջնորդաբար յուրացրել են մի շարք բառեր ու արտահայտություններ և որոշ չափով հարստացրել են իրենց բառային կազմը, առհասարակ եղել են նախքան հայոց և վրաց մատենագրության սկզբնավորումը: Այդ շփումները մինչ այդ մասամբ վերջանում են (ինչպիսիք են՝ փոքր-ասիական, ասուրական, տարտական և այլ հին լեզուների), մասամբ էլ գրանք այս կամ այն չափով շարունակվել են հայոց և վրաց մատենագրության սկզբնավորումից հետո էլ (գրանք են, օրինակ, իրանական, ասուրական, հունական և այլն):

¹ Տես Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմ., հ. 11:

Հետագայում սկսվում են արդեն այլ շփումներ, որոնց հետևանքով հայոց և վրաց լեզուները համալրվում են որոշ նոր բառերով ու արտահայտություններով. դրանք են՝ արարական, թուրք-թաթարական, եվրոպական ու ուսական շփումներն ու փոխհարաբերությունները:

Սրանցից՝ արարները 7-րդ դարի վերջերից նվաճելով Հայաստանն ու վրաստանը՝ հասնում են մինչև Կովկասյան լեռնաշղթան: Չնայած այդ տիրապետությանը (որ տևում է մոտ 250 տարի)՝ հայոց և վրաց լեզուները չազդվեցին արարերենից այն չափով, որ չափով ազդվել են մյուսներից (հատկապես պարսկերենից). գրական լեզվի վրա այդ ազդեցությունը չափազանց աննշան է: Արարական փոխառությունների զգալի մասը՝ հունական փոխառությունների նման (որ հաճախ զուտ տառագրվածություն է ներկայացնում կամ միայն ուսումնական ճանապարհով է առաջացած) բնավ չի մտել հայոց և վրաց լեզուների բառային կազմի հիմքը հանգիստացող բառային հիմնական ֆոնդի մեջ և հիմք չի տվել նրանց նոր բառերի կազմության համար: Սակայն որոշ բառեր այսօր էլ գործածություն ունեն և կենսունակ են (մանավանդ խոսակցական լեզվում), ինչպես, օրինակ, հյ. առլաս=վրց. առլաս-ի=արար. aṭlas., հյ. բակլա=վրց. բակլա=արար. baqla, հայ. բաս=վրց. բաս-ի=արար. tas, հյ. լորի=վրց. լորիո=արար. lubiya, հյ. կլայեկ=վրց. կալա=արար. qala'i, հյ. հունապ (հունաբ)=վրց. ունաբ-ի=արար. unnaḥ, հյ. նալ=վրց. նալ-ի պայտո=արար. na'ī, հյ. նարինջ=վրց. նարինջ-ի=արար. narinj, հյ. պատիննա=վրց. բադրիջան-ի=արար. bādinjan և այլն:

Հայ և վրաց ժողովուրդները Անդրկովկասի մյուս հարևան ժողովուրդների հետ դարեր շարունակ (սկսած 11-րդ դարից՝ շուրջ 900 տարի) ապրել են թուրք-թաթարական տարրեր ցեղերի (սելջուկների, թուրք-պարսիկների, մոնղոլ-թաթարների, էոզեկ-թաթարների, օսմանցիների) տիրապետության տակ: Դրանք թուրքական ասիմիլատորներն էին, — ինչպես բնկեր Ստալինն է ասում¹, — բոլոր ասիմիլատորներից ամենագամանները, որոնք հարյուրավոր տարիներ խոչտանգում և խեղում էին բալկանյան ազգերին, բայց նրանք ոչ միայն չկարողացան ոչնչացնել այդ ազգերին, այլև հարկադրված եղան տեղի տալու: Նույն դաժանություններ պարսկական ու թուրքական ասիմիլատորները հարյուրավոր տարիներ ծվատում, խոչտանգում ու բնաջնջում էին հայ և վրացի ազգերին, բայց նրանք ոչ միայն չկարողացան ոչնչացնել այդ ազգերին, այլ — ընդհակառակը — հարկադրված եղան նույնպես տեղի տալու: Ազգերը և ազգային լեզուները աչքի են ընկնում արտակարգ կայունությունով և ասիմիլացիայի քաղաքականությունը գլխավորելու վիթխարի ուժով: Այդ էր պատճառը, որ թուրք-թաթարական երկարժամանակյա և դաժան տիրապետության տակ հայոց և վրաց լեզուները կրեցին լեզվական որոշ ազդեցություն: Այդ ազդեցությունը, որ գերազանցում է նախկին բոլոր ազդեցությունները (այդ թվում նաև՝ պարսկերենի ազդեցությունը), նրանցից տարբերվում է նրանով, որ նախորդները սովորաբար ազդել են հայոց և վրաց գրական լեզուների վրա, իսկ սա ազդել է գերազանցապես նրանց բարբառների վրա (այն էլ որոշ բարբառների վրա՝ բերնե-բերան խոսակցության միջոցով): Որքան շրջակա

¹ Ի. Ստալին, Երկեր, հ. 11, էջ 303:

ժողովուրդներն էլ այս տեսակետից գտնվել են ճիշտ այն դրության մեջ, ինչ որ հայ և վրաց ժողովուրդները: Թուրքերենը ազդել է նաև ամբողջ բաղկանյան ժողովուրդների լեզուների վրա: Ճարտարավոր տարիներ շարունակ թուրքական ասիմիլատորները, — գրում է ընկեր Ստալինը, — ջանք էին թափում ազատելու, խորտակելու և ոչնչացնելու բաղկանյան ժողովուրդների լեզուները: Այդ ժամանակամիջոցի ընթացքում բաղկանյան լեզուների բառային կազմը ենթարկվեց լուրջ փոփոխությունների, յուրացվեցին ոչ-քիչ թուրքական բառեր ու արտահայտություններ, եղան նաև «մերձեցումներ» և «հեռացումներ», սակայն բաղկանյան լեզուները դիմացան և ապրեցին¹: Եռյն ձեռք գիմացան ու ապրեցին հայոց և վրաց լեզուները, զգալի փոփոխություններ կրելով նրանց որոշ բարբառները, ունենալով միաժամանակ որոշ «մերձեցումներ» ու «հեռացումներ»: Հայոց և վրաց գրական լեզուներում պահպանված են որոշ ընդհանուր բառեր, որ անցել են թուրքերենից (չհաշված այստեղ այն փոխառությունները, որ առաջ են եկած բուն ժողովրդական թուրքերենից և բերնե-բերան խոսակցություններից): Դրանցից են, օրինակ, հյ արխ = վրց. արխ-ի = թաթար. arx, հյ. բուխարիկ = վրց. բուխար-ի = թուրք. buxari, հյ. շոքել «ծունր գնել» = վրց. դա-շոքերա = թուրք. cökmeke. հյ. տոպրակ = վրց. տոպրակ-ի || րոփրա = թաթար. tubrak, ինչպես նաև՝ յոլա գնալ, դաղել, օջախ... և այլն, և այլն:

Սրանք, այսպես կոչված, արտաքին ազդեցություններն են, որոնց հետևանքով այս կամ այն չափով հարստացել են հայոց և վրաց լեզուները, հատկապես նրանց բառային կազմը: Դա կատարվել է գրական շփումների (թարգմանությունների) և քաղաքական ու կուլտուր-տնտեսական փոխհարաբերությունների կամ ասիմիլատորական քաղաքականությունների հետևանքով: Այսպես ասած, արտաքին ազդեցությունների հետևանքով յուրացված բառերը հայոց և վրաց լեզուներում մասամբ մնացել են նրանց բառային կազմի սահմաններում և մուտք չեն գործել նրանց բառային հիմնական ֆոնդի մեջ, որպես կենսունակ ու առօրյա գործածական բառեր (գրանք մեծ մասամբ թարգմանություններ կատարելիս տառադարձված օտար բառերն են), մասամբ էլ մտել են հայոց և վրաց լեզուների բառային հիմնական ֆոնդը, որպես առօրյա կենսունակ բառեր և հիմք են տվել նրանց նոր բառերի կազմության համար՝ զարգացման ներքին օրենքներով, որոնք վճռական են ու կարևոր և ամեն լեզվում գրեթե միապատասխան կամ բառակազմական յուրահատուկ ձևերով (որոնցով մի լեզու տարբերվում է մյուս լեզվից և որոնք հանդիսանում են բառապաշարի հարլստացման ներքին և ամենակարևոր միջոցները):

Հայոց լեզվի գրավոր շրջանի բառային կազմի մեջ սոցիալական, քաղաքական և կուլտուրական տարբեր պայմանների հետևանքով առաջ են գալիս անհրաժեշտ փոփոխություններ: Այդ փոփոխությունները, որոնք սահմանագծեցին հայոց գրավոր հին և միջին շրջանները, ակնբախ դարձան 11—13-րդ դարերում՝ աշխարհիկ գեղարվեստական գրականության հիմնադրման հետ կապված: Հետագա նշանակալից փոփոխությունները հայոց գրավոր լեզվի բառային կազմի, ինչպես նաև՝ նրա հիմքը հանդիսացող բառային հիմնական ֆոնդի մեջ առաջ եկան 19-րդ դարում ուստական կուլ-

¹ Բ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանությունից հարցերը, Երևան, 1951, էջ 58:

տուրայի հետ կապված ուղղակի շփոթման (որ այս կամ այն չափով դրսևավորվել են դեռևս վաղագույն ժամանակներից) և կյանքի բնականորեն վերածնման շնորհիվ:

Մյուս լեզուների նման, հայոց լեզվի բառային կազմը (ինչպես նաև՝ նրա հիմքը հանդիսացող բառային հիմնական ֆոնդը) զարգացման տարրեր փուլերում՝ նորանոր բառերով անընդհատ համալրվելու ու աճելու հետ միասին, որ կատարվում է բառերի ձևա-իմաստային փոփոխություններով ու զարգացումով, սեփական բառաստեղծական կամ բառակազմական միջոցներով, փոխառություններով և այլն, տեղի է ունենում նաև մի շարք բառերի իմաստի հնացում ու մահացում և այդ հնացած բառերի դուրս ընկնումը հայոց լեզվի գործածությունից: Բայց հնացած բառերը թվով ավելի սակավ են համալրվող ու ավելացող բառերից: ...լեզվի բառային կազմից սովորաբար դուրս են ընկնում որոշ քանակությամբ հնացած բառեր, նրան ավելանում են ավելի շատ նոր բառեր¹:

Այսպես, օրինակ՝ մի կողմից՝ աշխատանք բառը հին ճեղքություն, չարչարանք, խոնջանք, ճիգ՝ նշանակությունից անցել է գործ, զբաղմունք, ծառայություն՝ նոր նշանակության: ապրել բայը հին թիրկվել (վտանգից, մահից), ազատվել, պրծնել՝ իմաստից անցել է լեյանք ունենալ, կյանքը տևել, 2. կենցաղավարել և այլն՝ նոր իմաստին: ծախել բայը հին թռչն-չացնել, կոտորել, սպանել՝ իմաստից անցել է վաճառել՝ նոր իմաստին... և նման շատ բառեր: Սրանց հետ միասին առաջ են եկել նաև բազմաթիվ նոր բառեր, որոնցով համալրվել է հայոց լեզվի բառային կազմը (ինչպես նաև՝ նրա բառային հիմնական ֆոնդը): Մյուս կողմից՝ հայոց լեզվի գործածությունից, որոշ չափով, դուրս են ընկել հնացած բառեր, ինչպիսիք են, օրինակ, գրբ: այս ճողմ, ոգի (շունչ), չար ոգի՝ արկանել թձգել, նետել: արքսել կամ արքստել թվեր-վեր թռչել, ոստոստալ, աքացել: Բայ կամ Բայոց գագառների, այլև սողունների որջ: գանգ կամ գանգիւն թձայն աղմուկ, չխկոց: գայո լեզգոտոց ելիս, աղբ, ծարել լույսը բացվել, ծագել, խոշոշել ճարչարելով սպանել, խոլխոլել, կոյս լեղում... և այլն: Այս բնականորեն կարող ենք դիտել միայն գրավոր շրջանում, գրական հուշարձանների հիման վրա, որոնցով այնքան հարուստ է հայոց լեզուն:

Հայոց լեզվի բառային կազմը, որ, բնականաբար, արտացոլում է հայոց լեզվի փիճակի պատկերը, անցած լինելով իր զարգացման տարրեր փուլերը բազմադարյան գիր ու գրականության հիման վրա, աննախընթաց զարգացում ապրեց, անհամեմատ հարստացավ ու բազմակողմանի դարձավ հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ուղուցիայից հետո: Հայոց լեզվի բառային կազմը, ինչպես նաև նրա հիմքը հանդիսացող բառային հիմնական ֆոնդը համալրվել է բազմաթիվ նորանոր բառերով, ինչպիսիք են՝ բոլշևիկ, բրիգադիր, կոմունա, կոմունիստ, սոցիալիստ, սոցիալիզմ, կոմունիզմ, օրգան, օրգանիզմ, տրակտոր, կոմբայն և այլն, ինչպես նաև (ամենօրյա և սովորական կյանքի մեջ գործածվող)՝ շոկոլադ, վանիլ, վիտամին, կակաո, պուդրա, կրեմ, լակ, կեպի, ցիլինդր... կատետ, բիտկի, կաշա, սուպ, բորչչ, սուշկի, բուրիկ, ոուլետ, գալետ, սուխարի, բուլկի, պոնչիկ... ասետրինա, սելոդկա, սագան, սերուգա... տրիկո, բյազ, բոստոն, սատին, կավերկոտ, բա-

¹ Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Երևան, 1951, էջ 33-36: Տեղեկացիր 11-7

տիստ, ինդիկո, մարկիզետ, տուֆլի, սանդալ... և նման շատ բառեր, բոլորն էլ գալով ոռոսերենից կամ ոռոսերենի միջոցով։ Սրանք ևս, ինչպես Սովետական Միության մյուս լեզուների, այնպես էլ հայոց լեզվի խիստ կենսունակ, առօրյա գործածական ու անհրաժեշտ բառերից են, բայց նրանցից տարբերվելով ծագման ու նորագունությունից՝ նրանց համեմատությամբ ոչ պակաս (երբեմն նույնիսկ ավելի) կարևոր են ու կենսունակ հայոց լեզվի համար, որ մյուս լեզուների նման, անմիջականորեն, կապված լինելով մտածողության հետ, այդ և մյուս բառերի մեջ ու դրանց միակցությամբ նախադասությունների մեջ, գրանցում ու ամրապնդում է մտածողության աշխատանքի արդյունքները, մարդու իմացական աշխատանքի հաջողությունները և, այդպիսով, հնարավոր է դարձնում մտքերի փոխանակությունը հայ հասարակության մեջ։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ուղուցիան Սովետական Միության մեջ ոչ միայն գիր ու գրականություն ունեցող ազգություններին, ինչպիսիք հայ, վրացի և այլ ժողովուրդներն էին, այլև ոչնչացման ճանապարհին կանգնած բազմաթիվ մանր ազգություններին վերադարձրեց իրենց ապրելու իրավունքը, ստեղծեց նրանց համար զարգացման ու բարգավաճման լայն հեռանկարներ՝ ձևով ազգային ու բովանդակությամբ սոցիալիստական իրենց կուլտուրաները զարգացնելու ու ծավալելու, իրենց ներուժակությունները զբաղեցնելու տեսակետից՝ ոռոս մեծ կուլտուրայի ու լեզվի բարերար ազդեցության տակ և սովետական ժողովուրդների համերաշխ ընտանիքում։

Այս բոլորն իրենց արտացոլումն են գտնում ինչպես Սովետական Միության մյուս լեզուների, այնպես էլ հայոց լեզվի բառային կազմի և նրա հիմքը հանդիսացող բառային հիմնական ֆոնդի մեջ, անհամեմատ հարստացնելով ու բազմակողմանի դարձնելով այն, զգալի չափով համալրելով նորանոր բառերով ու արտահայտություններով, որոնք վերաբերում են մեծ մասամբ գիտության, փիլիսոփայության, գրականության և արվեստի բոլոր ճյուղերին, նրանց հետ կապված ամենարարդ ու նրբին հասկացողություններ ու գաղափարներ արտահայտելուն։ Չգալի քանակությամբ նոր բառեր ու արտահայտություններ առաջացան սոցիալիստական նոր արտադրության առաջացման, նոր պետության, սոցիալիստական նոր կուլտուրայի, նոր հասարակայնության մորալի երևան գալու կապակցությամբ, վերջապես, տեխնիկայի ու գիտության աճման կապակցությամբ։ փոխվեց մի շարք բառերի ու արտահայտությունների իմաստը, որոնք ստացան իմաստային նոր նշանակություն։ Բառարանից դուրս ընկան որոշ քանակությամբ հնացած բառեր։

Այսպիսով, հայոց դրական լեզվի բառային կազմի զարգացումը երեք հիմնական շրջան է անցել՝ հին, միջին և նոր, նորն էլ բաժանվում է երկու շրջանի՝ նախասովետական ու սովետական։

Այսպիսին է, իմ կարծիքով, ընդհանրապես ծագումը, բնույթն ու զարգացումը այն լեզվի բառային կազմի, որով մշակվել ու պահպանվել է հայոց բազմադարյան հարուստ գրականությունը։